## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«12» «փետրվարի» 2020թ. № 54-Ա

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն քարտուղարության արձանագրային և արխիվացման բաժնի ավագ մասնագետ Անուշ Գրիգորյանի կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) Գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի 2020 թվականի հունվարի 9-ի N Ն 08.2/65 հանձնարարականը՝ «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Գաբրիելյանին չառաքելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

1) Աշոտ Ավալյան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,
2) Նաիրա Ալավերդյան – Քարտուղարության պետ,
2) Արմինե Հովհաննիսյան – Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 10 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

2/12/2020

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«---12---» փետրվարի 2020թ.

ք. Երևան